ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի համար սերվերային համակարգեր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության CBA-2022-018 ծածկագրով գնանշման հարցման կազմակերպման մասին

2022-04-25

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի համար սերվերային համակարգեր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության CBA-2022-018 ծածկագրով գնանշման հարցման կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է գնանշման հարցում՝ բանկի կարիքների համար սերվերային համակարգեր մատակարարող կազմակերպություն ընտրելու նպատակով:

Գնանշման հարցմանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով թղթային ձևով, ՀՀ կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով (մուտքը Դեղատան փողոցից) ներքին հեռ. 06-26, 06-27:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2022թ. մայիսի 19-ին ժամը 16-00-ն:

Հայտերի բացման նիստը տեղի կունենա ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 6 հասցեով, 2022թ. մայիսի 19-ին ժամը 16-00-ին:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2022թ. մայիսի 26-ին ժամը 16-00:

Մրցույթի հրավերը հրապարակված է ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքում ( ): Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի Գնումների համակարգման ծառայություն, էլ. Փոստ՝ :

25.04.2022թ.
ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն